«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Ա Վ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

Հետազոտության թեման՝ Սովորողների մեջ համագործակցային կարողությունների ձևավորումը <<Հայոց լեզու>> և <<Գրականություն>> առարկաների դասավանդման գործընթացում

Առարկան՝ << Հայոց լեզու, գրականություն>>

Հետազոտող ուսուցիչ՝ **Գոհար Աքելյան**

Ուսումնական հաստատություն՝ Գավառի Հ. Թումանյանի անվան N 3 հիմնական դպրոց

ԳԱՎԱՌ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Ի՞նչ է համագործակցային ուսուցումը

2.Ավանդական եվ համագործակցային ուսուցման տարբերությունները

3. Համագործակցային ուսուցման տարրերը

4. Համագործակցային ուսուցման խմբերի տեսակները

5. Համագործակցային ուսուցման մեթոդներ

6. Խմբեր կազմելու համակարգված եղանակներ

7. Մեջբերումներ համագործակցության վերաբերյալ

8. Համագործակցային ուսուցման ուղենիշներ

9. Համագործակցային ուսուցման դասի պլան

Եզրակացություն

Գրականության ցանկ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթության հիմնական նպատակը հետագա ինքնազարգացման ունակ, ազատ,պատասխանատու մարդասիրական անհատականության ձևավորումն է: Կրթված մարդը, ով հեշտությամբ նավարկում է փոփոխվող հասարակության մեջ,արագ տիրապետում է գործունեության նոր ոլորտներին, ունի հանդուրժողականության բարձր մակարդակ , կարողանում է վերլուծել նոր իրավիճակը, գնահատել այն և համապատասխան որոշում կայացնել. սա հասարակության քաղաքացին է:

Կրթության ոլորտի աշխատողները ամենուրեք գիտակցում են , որ դասավանդման և ուսուցման հնացած ձևերը այլևս անկարող են ստեղծել ու զարգացնել գիտելիքներ ու հմտություններ, որոնք անհրաժեշտ են քաղաքացուն գիտելիքների տնտեսության մեջ բարեկեցիկ կյանքով ապրելու համար:Հետևաբար, ինչպես Հայաստանում ,այնպես էլ ամենուրեք ,դպրոցում անհրաժեշտ են դասավանդման և ուսուցման այլընտրանքային այլ մոտեցումներ:

Համագործակցային ուսուցման , ուսումնառության արմատները հասնում են Ջոն Դյուիի աշխատություններին, որտեղ հեղինակը, ընդգծելով կրթության կարևորությունը, այն դիտարկում է որպես ուսուցման այնպիսի մեխանիզմ , որը քաղաքացիներին սոցիալ, ժողովրդական հասարակարգում համագործակցության սկզբունքներով ապրելու ունակություններ է տալիս: Ներկայումս հետազոտողներն ամբողջ աշխարհում ուսումնասիրում են համագործակցային ուսումնառության սկզբունքների գործնական կիրառությունները:

1. Ի՞ՆՉ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

<<Ոչ մի հետաքրքիր նորույթ ի հայտ չի գալիս առանց համագործակցության >>:

Ջեյմս Ուայթսոն

Համագործակցային ուսուցումը համատեղ սովորելու եղանակ է, երբ խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանը ներգրավված են ակտիվորեն, և գիտելիքը մշակվում ու հարմարեցվում է վերափոխման միջոցով:Այլ խոսքով՝ համագործակցային ուսուցումն իրականցվում է միմյանց լսելու, ըմբռնելու ,խոսելու և հասկանալու միջոցով:Համագործակցային ուսուցման մեջ էական են ոչ միայն ակադեմիական գիտելիքներ և հմտություններ սովորելը, այլ կարևոր է խմբային զարգացման միջոցով դառնալ հմուտ համագործակցողներ և գիտելիքների ակտիվ կիրառողներ:

Համագործակցային ուսուցումը ուսուցման կազմակերպման ձև է սովորողների առանձին խմբերում , որոնք միավորված են ընդհանուր կրթական նպատակով: Այստեղ ուսուցիչը յուրաքանչյուր աշակերտի աշխատանքն ուղղորդում է անուղղակիորեն այն առաջադրանքների միջոցով, որոնցով նա ղեկավարում է խմբի գործունեությունը: Կատարելով ընդհանուր նպատակի մի մասը ամբողջ դասարանի համար՝ խումբը կոլեկտիվ քննարկման գործընթացում ներկայացնում և պաշտպանում է կատարված առաջադրանքը:Նման քննարկման հիմնական արդյունքները դառնում են ամբողջ դասարանի սեփականությունը:

Համագործակցային ուսուցումը մեծացնում է սովորողների ինքնուրույնությունը և պատասխանատվությունը:Երբ համագործակցային ուսուցումը կիրառվում է խորությամբ ,այն դառնում է դասարանի աշխատանքային մշակույթ:

Համագործակցային ուսուցումը կրթության հանդեպ վերաբերմունք կամ մոտեցում է , որը ներառում է ուսուցման ժամանակակից հայեցակարգեր:

Երբեմն դասավանդման ընթացքում կիրառվում է խմբային աշխատանքը,սակայն պակասում է ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման հիմնական տարրերն ու մեթոդները ինտեգրելու համար անհրաժեշտ վարպետություն : Եվ ամեն խմբային աշխատանք չի ենթադրում համագործակցային ուսուցում: Ուսուցումը համագործակցային կլինի այն դեպքում , երբ աշակերտները միասին , զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու , մի ընդհանուր թեմա հետազոտելու կամ նոր միտք ,նորարարություն իրականացնելու համար:Համագործակցային ուսուցումը , որպես այլընտրանքային մանկավարժական

մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել բազմաթիվ երկրների ,ուսուցիչների և նրանց վերապատրաստողների կողմից: Դրա լայն տարածմանը նպաստող գործոններից են՝

.դասարաններում ուսուցումը սովորողի անհատական առանձնահատկություններին հարմարեցնելը:

.բազմակողմանի կրթական նպատակներին միաժամանակ հասնելու հնարավորությունը:

.ուսուցման առանձնահատկություններին,ժամանակակից մոտեցումներին համահունչ լինելը:

2. ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ավանդական խմբեր	**Համագործակցային խմբեր**
Միասեռ խմբավորում	Տարասեռ խմբավորում
Պատասխանատվություն միայն սեփա կան անձի համար	Պատասխանատվություն խմբի և սեփա կան անձի համար
Փոխկախվածության բացակայություն	Դրական փոխկախվածություն
ՈՒսուցչի կողմից չնչին վերահսկողություն	ՈՒսուցչի կողմից մշտական վերա հսկողություն
Մեկ առաջնորդ	Առաջնորդության հաջորդական ստանձ նում
Առանձնահատուկ դերի բացակայություն	Դերերի բաշխում
Նպատակների ոչ հաճախ հստակեցում	Նպատակների հստակ սահմանում
Հաղորդակցական հմտությունները ենթա դրվում են	Հաղորդակցական հմտությունները անմի ջականորեն ուսուցանվում են
Խմբի նվաճումների կամ թերացումների վերլուծության բացակայություն	Ակադեմիական և հաղորդակցական հմտությունների մշակում
Խմբի մեծությունը հազվադեպ է նկատի առնվում	Խումբը ունի 3-5 անդամ
Շեշտը դրվում է վերջնարդյունքի վրա	Շեշտը դրվում է գործընթացի և վերջնարդյունքի վրա

3. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԱՐՐԵՐԸ

Համագործակցային ուսուցման տարրերը ըստ Ջոնսոնների հինգն են՝

1.**Դրական փոխկապակցվածություն**

Խմբում ձևավորվում է միմյանց օգնելու,խրախուսելու,աջակցելու մթնոլորտ:Սովորողի ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն:Այն նպաստում է հանդուրժողականության և վստահության ձևավորմանը: Քննարկումներն ու ձգտումներն օգնում են խմբի անդամների փոխհարաբերություններին:

2. **Դեմ առ դեմ խթանող փոխազդեցություն**

Խմբի անդամները համագործակցում են, փոխանակում են տեղեկություններ, կարծիքներ և ռեսուրսներ, մշակում և վերլուծում են տեղեկությունը, ապահովում են հետադարձ կապ, քաջալերում և աջակցում են միմյանց՝ ընդհանուր նպատակին հասնելու համար:

3. **Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն**

Խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու, կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար, խմբի մաս է, գաղափարներով և մտքերով կիսվում է մյուս անդամների հետ, պատրաստ է ներկայացնելու խմբի աշխատանքի արդյունքը:

4. **Սոցիալական հմտություններ**

Խմբի անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր՝ անաղմուկ աշխատանք, ներկայություն մինչև աշխատանքի ավարտը, խոսողին հետևելը, առաջադրանքը կատարելիս ներդրում ունենալը:

5. **Խմբային գործընթաց**

Խմբի անդամների հաջողությունների,փոխհարաբերությունների,համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննման փուլ է:Դրանք զարգացնում են սոցիալական հմտությունները,ապահովում են խմբի անդամների գործողությունների և մասնակցության հետադարձ կապը:

Հետագայում այդ տարրերին Պասի Սալբերգի կողմից ավելացվեց փոխներգործուն (ինտեսիվ)առաջադրանքը որպես համագործակցային ուսման 6-րդ տարր:Նրա

կարևոր չափանիշն այն է, որ խմբի անդամները հեշտությամբ մասնակցեն առաջադրանքի կատարմանը:

4. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԽՄԲԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Համագործակցային պաշտոնական (formal) խմբերը

Աշակերտները մեկ կամ մի քանի դասի ընթացքում համատեղ աշխատանք են տանում ընդհանուր (խմբային) նպատակների իրագործման կամ հանձնարարությունների կատարման ուղղությամբ: Համագործակցային այս խմբերը համագործակցային ուսումնառության բոլոր այլ ընթացակարգերի հիմքն են հանդիսանում:Այդ խմբերը կազմվում են նախօրոք կայացված որոշման հիման վրա, որը միաժամանակ սահմանում է խմբի ընդհանուր նպատակը և համագործակցության բնույթը,խմբերի աշխատանքի վերահսկման ձևերը,ուղղություն ցույց տալու նպատակով խմբերի աշխատանքին միջամտելու եղանակները,աշակերտների աշխատանքի գնահատման չափանիշները և խմբային աշխատանքի խթանման ուղիները:

Ոչ պաշտոնական համագործակցային խմբերը

Աշակերտներն աշխատում են ժամանակավոր կամ պատահական խմբերով՝ միայն մեկ դասի ընթացքում որևէ ընդհանուր հանձնարարություն կատարելու նպատակով: Ոչ պաշտոնական համագործակցային խմբերի մեթոդը կիրառվում է աշակերտների ուշադրությունը նոր թեմայի (նյութի) վրա սևեռելու, յուրացման բարենպաստ մթնոլորտ ստեղծելու և՛ նյութի լիարժեք վերլուծությունը և՛ ընկալումը խթանելու համար:

Համագործակցային հիմնական խմբերը

Սրանք անփոփոխ ամդամներով երկարաժամկետ խմբեր են (առնվազն մեկ կիսամյակ կամ մեկ ուսումնական տարի),որոնց նպատակն է խմբի յուրաքանչյուր անդամին հատկացնել այնքան օգնություն,խրախուսանք և ոգեշնչում, որն անհրաժեշտ է նրան առավել բարձր առաջադիմության հասնելու և հասարակական ու ճանաչողական առումներով զարգանալու համար:

Ոչ պաշտոնական համագործակցային ուսումնառությունը մի քանի րոպեից մինչև մեկ դասաժամի ընթացքում աշակերտների համատեղ աշխատանքն է ժամանակավոր, ըստ անհրաժեշտության ստեղծված (ad hoc) խմբերով (Ջոնսոն,Ջոնսոն և Հոլաբեք,1998թ.): Ոչ պաշտոնական համագործակցային ուսումնառությունը հնարավորություն է տալիս բացահայտել և հարթել տարբեր հայեցակարգերի սխալ կամ ոչ լիարժեք ըմբռնումը, և անհատականացնել յուրացման

գործընթացը,այսինքն ապահովել նյութի ընկալումը յուրաքանչյուր աշակերտի կողմից: Յուրաքանչյուր 10-15 րոպե աշակերտներին պետք է հանձնարարել խմբերով քննարկել նոր ներկայացված նյութը:Նոր նյութի ներկայացումը պարբերաբար ընդհատելով խմբային համատեղ քննարկումների համար, ուսուցիչն իրեն որոշ չափով զրկում է <<դասախոսական>> ժամանակից,սակայն միաժամանակ լուծում է դասախոսությունների հիմնական թերությունը համարվող խնդիրը.<<Տեղեկությունները ուսուցչի տետրից անցնում են աշակերտների տետրերը, առանց հասնելու նրանցից որևէ մեկի գիտակցությանը>>:

Դասախոսության և ուղղակի ուսուցման ընթացքում աշակերտները կարևորում են նյութի կազմակերպման,բացատրման ու ամփոփման և արդեն գոյություն ունեցող հայեցակարգային ցանցում դրա տեղեկացման ողջ ինտելեկտուալ աշխատանքը:

Ոչ պաշտոնական համագործակցային ուսումնառության ընթացակարգը կազմված է դասախոսության առանձին հատվածներից առաջ և հետո անցկացվող <<կոնկրետ քննարկումներից>>և <<դիմիր ընկերոջդ>>քննարկումներից:

1.**Կոնկրետ քննարկումը.**Առաջադրում ենք մեկ կամ երկու հարց, որոնք կօգնեն աշակերտներին նախօրոք կազմակերպել այն ամենը, ինչ իրենք գիտեն նոր թեմայի շուրջ, և որոշել ,թե տվյալ թեմայի վերաբերյալ ինչ նոր գիտելիքներ իրենց պետք է տա դասախոսությունը: Աշակերտներին բաժանում ենք երկու կամ երեք հոգանոց խմբերի: Հանձնարարում ենք (ա) չորս րոպեի ընթացքում պատասխանել ներկայացված հարցերին և (բ) հարցի վերջնական խմբային պատասխան ընտրել դրական փոխկապակցվածության գործընթացի և փոխհամաձայնության միջոցով:

2**. << Դիմիր ընկերոջդ >> քննարկումները.** Դասը բաժանում ենք 10-15 րոպեանոց հատվածների: Սա մոտավորապես այն ժամանակահատվածն է , որի ընթացքում թեմայով հետաքրքրված սովորողը կարող է կենտրոնացած ուշադրությամբ լսել ուսուցչին:Յուրաքանչյուր հատվածից հետո աշակերտները պետք է իրենց կողքին նստած համադասարանցու հետ համատեղ գտնեն առաջադրված հարցի պատասխանը(դա պետք է շատ կոնկրետ հարց լինի,որպեսզի աշակերտները կարողանան երեք րոպեի ընթացքում պատասխանել); Ընդ որում,հարցը պետք է այնպիսին լինի,որ ստիպի աշակերտներին վերլուծաբար մտածել ներկայացվող թեմայի մասին:Ընթացակարգը հետևյալն է.

ա. Յուրաքանչյուր աշակերտ կազմում է սեփական պատասխանը:

բ. Յուրաքանչյուր աշակերտ իր պատասխանը ներկայացնում է կողքին նստած դասընկերոջը:

գ. Աշակերտները ուշադիր լսում և ընկալում են դասընկերների ներկայացրած պատասխանները:

դ. Աշակերտները զույգերով կազմում են վերջնական պատասխանը, որը պետք է երկու դասընկերների անհատական պատասխանների ինտեգրված տարբերակը լինի և արտահայտի երկուսի մտքերն ու կարծիքը:

Որպեսզի համոզվենք,որ զույգի երկու անդամներն էլ մասնակցել են ընդհանուր պատասխանը կազմելուն, պատահական ընտրությամբ երկու կամ երեք աշակերտի առաջարկում ենք երեսուն վայրկյանի ընթացքում համառոտ ներկայացնել իրենց զույգի միջև տեղի ունեցած քննարկումը:Շարունակում ենք աշխատել 10 – 15 րոպեանոց հատվածներով և պարբերական քննարկումներով մինչև որ ներկայացնում ենք ողջ նյութը:

3. Ավարտական քննարկումը. Նյութի ներկայացման ավարտին աշակերտներին հանձնարարում ենք քննարկել, թե ինչ սովորեցին տվյալ դասի ընթացքում: Այս քննարկումը կօգնի աշակերտներին նոր նյութն ինտեգրել իրենց՝ արդեն ունեցած գիտելիքների և հայեցակարգերի ցանցին, կանխատեսել, թե ինչ է լինելու տնային աշխատանքը կամ ինչ են անցնելու հաջորդ դասին և հստակ ձևակերպել նոր նյութին առնչվող իրենց հարցերը: Սրանով էլ պետք է դասն ավարտվի:

Ոչ պաշտոնական համագործակցային ուսուցումը հնարավորություն է տալիս ապահովել աշակերտների կողմից նոր նյութի լիարժեք ընկալումը:Այն միաժամանակ ուսուցիչներին ժամանակ է տալիս շունչ քաշել, կշռադատել իրենց ասելիքը, շրջել դասարանում և լսել, թե ինչ են խոսում աշակերտները: Աշակերտների քննարկումը լսելն ուսուցչին հնարավորություն է տալիս ժամանակին պարզել, թե որքանով են աշակերտներն ընկալել ներկայացված նյութը և հայեցակարգերը և դրա հիման վրա Է՛լ ավելի արդյունավետ ներկայացնել նյութի հաջորդող հատվածները:

Ոչ պաշտոնական համագործակցային ուսուցման նպատակը.

Զույգեր կազմելով աշակերտների ուշադրությունը կենտրոնացնում ենք ներկայացվող նյութի վրա:

Բարենպաստ մթնոլորտ է ստեղծվում յուրացման համար:

Օգնում է աշակերտներին նախապես մտովի կազմակերպել այն, ինչ իրենք արդեն գիտեն ներկայացվելիք նյութի վերաբերյալ:

Ստիպում է աշակերտներին վերլուծականորեն մոտենալ և ընկալել ներկայացվող նյութը:

Հնարավորություն է տալիս արդյունավետ ամփոփել դասը:

Հնարավորություն է տալիս ժամանակին բացահայտել նյութի սխալ կամ թերի ըմբռնման դեպքերը և ուղղել դրանք:

Հնարավորություն է տալիս ապահովել նյութի յուրացումը յուրաքանչյուր աշակերտի կողմից:

Կոնկրետ քննարկումը. Մինչև դասն սկսելը, աշակերտներին հանձնարարում ենք համառոտ նախնական քննարկում անցկացնել:

Քննարկման հարցերն այնպես կազմել,որպեսզի արդյունքում աշակերտները կարողանան նախապես կազմակերպել այն ամենը,ինչ իրենք գիտեն նոր թեմայի մասին և որոշել,թե տվյալ թեմայի վերաբերյալ ինչ նոր գիտելիքներ իրենց պետք է տա դասախոսությունը: Ըստ այս տվյալների էլ կազմակերպում ենք դասը:

Հանձնարարությունը. Պատասխանել հարցերին

Պահանջվում է ընկերոջ հետ միասին գտնել ներկայացված հարցի մեկ համատեղ պատասխան՝ հետևելով արդեն ներկայացված զույգերով քննարկման ընթացակարգին:

Հաջողության չափանիշը.

Յուրաքանչյուր աշակերտ ունակ է բացատրել պատասխանները

5. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

Համագործակցության վերաբերյալ սոցիալ – հոգեբանական հետազոտություններ կատարվել են 1920 – ական թվականներից: Սակայն դասարանում համագործակցային ուսումնառության կոնկրետ կիրառման ուսումնասիրություններն սկսվեցին միայն 70 – ականների սկզբներին: Հետազոտողների չորս անկախ խմբեր ձեռնարկեցին կոնկրետ դասարանական միջավայրի համար համագործակցային ուսումնառության մեթոդների հետազոտումն ու մշակումը:Ներկայումս հետազոտողներն ամբողջ աշխարհում ուսումնասիրում են համագործակցային ուսումնառության սկզբունքների գործնական կիրառությունները : Եվ արդեն բազմաթիվ մեթոդներ են ստեղծվել:

Դրանց մի մասը տարբեր ժամանակներում կիրառվել են որոշ մանկավարժների կողմից, սակայն դրանք չունեին որոշակի կառուցվածք և պաշտոնական բնույթ: ՈՒ սուցման համագործակցային այս հնարները սկսեցին զարգանալ շուրջ քսան տարի առաջ: Այժմ արդեն գոյություն ունի տարբեր նպատակներ հետապնդող և կիրառվող համագործակցային ուսումնառության մեթոդների մի ամբողջ զինանոց:

Համագործակցային ուսումնառության մեթոդները կարող են արդյունավետորեն գործադրվել ցանկացած դասարանում՝ ցանկացած բովանդակություն ուսուցանելու համար: Այս մեթոդները հաջողությամբ կիրառվում են ինչպես համասեռ / հավասար ընդունակությունների տեր աշակերտներից կազմված/, այնպես էլ օժտված երեխաների կամ ԿԱՊԿՈՒ սովորողների համար: Համագործակցային մեթոդների կարիքն զգացվում է հատկապես առաջադիմության տարբեր մակարդակներ դրսևորող դասարաններում: Համագործակցային ուսուցումը կարող է նպաստել սովորողների կարողությունների բացահայտմանը: Հնարավորությունների տարբերությունները ավելի շուտ դառնում են միջոց, ռեսուրս քան՝ հիմնախնդիր:

Աշակերտների թիմային առաջադիմություն

Համագործակցային ուսուցման այս մեթոդը մշակվել է Ջոն Հոփքինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի կողմից: Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը:Այստեղ էական է այն հանգամանքը,որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին ու բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները պետք է մի կողմից օգնեն իրենց դասընկերներին,մյուս կողմից՝ կարողանան պահպանել և բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛ առանձին աշակերտների, և՛ խմբերին:

Խճանկար /ջիգսո,Jigsw/

Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է: Այն մշակվել և փորձարկվել է Տեխասի A&M համալսարանում Էլիթ Արոնսոնի և նրա գործընկերների կողմից, այնուհետև լրամշակվել է Սլավինի և վերջինիս գործընկերների կողմից: Խճանկարի փուլերն են.

ա. նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում

բ. աշխատանք փորձագիտական խմբում

գ. աշխատանք ուսումնական խմբում

դ. ավարտական աշխատանք

ե. ամփոփում

Շրջագայություն պատկերասրահում

Սա <<Խճանկար>> մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ:

Երեք բանալի և մեկ կողպեք

Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով: Այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում, որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ կան: Այս մեթոդով աշխատելիս աշակերտների մեջ ձևավորվում է ընտրություն կատարելու, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն, ինչպես նաև համագործակցելու, իր ընտրությունը հիմնավորելու կարողություն:

Հինգրոպեանոց ազատ շարադրանք

<< Հինգրոպեանոց ազատ շարադրանք >> մեթոդը կարող է կիրառվել ինչպես դասի խթանման փուլում,այնպես էլ կշռադատման՝ ելնելով դասի նպատակից և թեմայից: Ընտրում ենք թեման և առաջարկում հինգ րոպեի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը,որից հետո դադարեցնում են աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրած շարադրանքը:

Համագործակցային ընթերցանություն և շարադրություն

Սա համակողմանի ծրագիր է՝ տարրական և միջին դասարաններում կարդալ ու գրել սովորեցնելու նպատակով: Աշակերտների խմբերում ընդգրկվում են ընթերցանության տարբեր մակարդակներ ունեցող աշակերտների զույգեր: Նրանք կատարում են ճանաչողական տեսակետից գրավիչ մի շարք աշխատանքներ, այդ

թվում՝ միմյանց համար ընթերցել, պատմության ավարտի մասին կռահումներ անել, պատմվածքը մեկը մյուսի համար ամփոփել,պատմվածքին գրավոր արձագանքել, ուղղագրական, բացատրական, բառարանային վարժություններ կատարել և այլն:ԹԱԳ – ի սկզբունքին համաձայն՝ առաջին օրը ուսուցիչն աշակերտներին բացատրում է թիմային աշխատանքի հետևյալ կանոնները / դրանք կարելի է գրել գրատախտակին կամ ցուցապաստառին/.

. յուրաքանչյուր աշակերտ պետք է այնպես անի,որ իր թիմակիցները յուրացնեն նյութը:

. ոչ ոք սովորելը չի ավարտել,քանի դեռ բոլորը չեն յուրացրել նյութը:

. նախքան ուսուցչից օգնություն խնդրելը դիմի՛ր ընկերներիդ:

. թիմակիցները կարող են ցածրաձայն խոսել իրար հետ:

Ցանկության դեպքում աշակերտները կարող են ավելացնել նաև լրացուցիչ կանոններ:

Մինչ աշակերտներն աշխատում եմ խմբերով, ուսուցիչը շրջում է դասարանում,գովասանքի խոսքեր ասում լավ աշխատող խմբերին, կարճ ժամանակով նստում յուրաքանչյուր թիմի հետ և հետևում, թե ինչպես են աշխատում աշակերտները, հիշեցնում համագործակցային աշխատանքի կանոնների պահպանման անհրաժեշտությունը:

Ջոնսոնները մշակել են նաև աշակերտներին <<համագործակցային բանավեճի>> մեջ ներգրավելու մեթոդներ: Չորս հոգանոց խմբերին տրվում են նյութեր՝ որևէ վիճահարույց թեմայի վերաբերյալ. Օրինակ՝ << Ով՞ էր մեղավոր ,,Հասարակաց որդեգիրը .. պատմվածքում>>: Աշակերտները, փոխելով դերերը, փորձում են փաստարկել իրենց տեսակետները:

Բոնոյի վեց գլխարկները

Այս մեթոդի օգնությամբ տարբեր մոտեցումներն ու գաղափարները հանդես են գալիս միաժամանակ՝ առանց մեկը մյուսի նկատմամբ առավելության:
Արդյունքում քննարկման մասնակից սովորողները հասկանում են, որ գաղափարները ոչ միայն կարող են լինել լավ կամ վատ, դրական կամ բացասական, այլ նաև կարող են տանել դեպի այլ գաղափարներ՝ ակտիվացնելով ստեղծագործական մտածողությունը:

Մեթոդը թույլ է տալիս ստեղծել մտածողության այնպիսի մոդել, որտեղ բազմադիտարկվում են մտածողության ձևերը՝ յուրաքանչյուր փաստարկ դարձնելով նոր գաղափար:

6. ԽՄԲԵՐ ԿԱԶՄԵԼՈՒ ՀԱՄԱԿԱՐԳՎԱԾ ԵՂԱՆԱԿՆԵՐ

. Ընտրում ենք Թումանյանի որևէ քառյակ, տողերն առանձնացնում իրարից, նստածներից յուրաքանչյուրին տալիս մեկը:

Նույն տողն ընտրածները միավորվում են մի խմբում. Այսպես ձևավորվում են համապատասխան քանակությամբ խմբեր:

. Առանձնացնում ենք Չարենցի կամ Սահյանի բանաստեղծություններից հինգը կամ վեցը՝ նայած, թե քանի հոգանոց խումբ ենք ուզում ձևավորել:

Բոլոր բանաստեղծությունների տողերն առանձնացնում ենք իրարից, խառնում և բաժանում մասնակիցներին: Յուրաքանչյուրն ընտրում է մի թերթիկ, ուր որևէ բանաստեղծության որևէ տողն է: Բաժանելուց հետո առաջարկվում է շրջել դասարանով և գտնել նույն բանաստեղծության տողն ունեցողին: Այսպես, միևնույն բանաստեղծության տողերով ձևավորվում են խմբեր: Ձևավորված խմբերը միասին կամ առանձին տողերով ընթերցում են բանաստեղծությունը:

. Խմբերին բաժանում ենք առանձին թերթիկներ, որոնցից յուրաքանչյուրի վրա որևէ հանրածանոթ երգից տող է գրված: Եթե նպատակ ունենք ստանալու չորս խումբ, ուրեմն ամեն երգի նույն տողը չորս անգամ կրկնվելու է: Նույն տողն ունեցողները կազմում են խումբ: Ձևավորված խմբերը կատարում են երգն ամբողջությամբ, որն էլ համապատասխան աշխատանքային մթնոլորտ է ձևավորում:

. Աշակերտներին խնդրում ենք գտնել մեկին, որն ինչ - որ բանով նման է իրեն և զույգ կազմել:Օրինակ, ասենք՝ կարմիր հագուստ կրողները նստեն իրար կողքի: Բարձրացնել երկու մատը, եթե ծնվել են զույգ թվով ամսում, մեկ մատը, եթե ծնվել են կենտ թվով ամսում: Զույգ են կազմում նույն հատկանիշն ունեցող մեկ ուրիշ աշակերտի հետ:

. Հին և սիրված եղանակ է, երբ աշակերտները շրջանով հաշվում են մինչև 4-ը կամ 5-ը, ապա նորից սկսում՝ մինչև բոլորը համարներ ունենան: Այնուհետև առանձին խմբեր են կազմում 4 առաջին համարները, 4 երկրորդ համարները և այդպես շարունակ:

7. ՄԵՋԲԵՐՈՒՄՆԵՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

. Ավելի լավ է ճկվել,քան կոտրվել:

Շոտլանդական ասացվածք

. Մեկ ձեռքի ծափն աղմուկ չի հանի / Մի ծաղկով գարուն չի գա/:

Մալազիական ասացվածք

. Կամ կսովորենք եղբայրների պես ապրել, կամ էլ հիմարների պես կմեռնենք:

Մարտին Լութեր Քինգ

. Այս մի բուռ աշխարհում մարդիկ այլևս անծանոթների պես չեն կարող ապրել:

Ադլայ Է. Ստիվընսոն

. Մեկ նետը հեշտությամբ է կոտրվում, իսկ տասը նետից կազմված կապոցը՝ ոչ:

Ճապոնական ասացվածք

. Սարդոստայնները միավորվելով կարող են կապկպել առյուծին:

Եթովպիական ասացվածք

8. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ

1. Ուշադրությամբ լսե՛ք, երբ խոսում են խմբի անդամները:

2. Աշխատանքը հավասարապես բաշխեք խմբի անդամների միջև: Յուրաքանչյուր մարդ պետք է ունենա առնվազն մեկ կամ ավելի հանձնարարություն:

3. Խմբի յուրաքանչյուր անդամին քաջալերեք, որ մասնակցեն իրենց գաղափարներով ու մտքերով:Մի՛ զլացեք գովեստի խոսք ասել խմբի անդամներին իրենց ավանդի համար:

4. Փորձեք աշխատանքում ներառել բոլորի մտքերը, ոչ թե մի քանիսինը:

5. Հարգալից վերաբերմունք ցուցաբերեք խմբի անդամների նկատմամբ: Եղեք համբերատար և օգնեք օգնության կարիք ունեցողներին: Խուսափե՛ք խմբի անդամներին ղեկավարելուց, նրանց արտահայտած մտքերը ծաղրելուց:

6. Մի՛ վիրավորվեք և մի՛ բարկացեք, երբ թիմը ձեր մտքերը կառուցողական քննադատությամբ է ընդունում: Եղեք անկեղծ և նոր գաղափարների արտահայտումը մի՛ կաշկանդեք անհանդուրժողականությամբ:

7. Եթե ձեր թիմը չի կարողանում որոշում կայացնել,փորձեք փոխզիջման գնալ տարաձայնությունները շտկելու համար: Ձանացե՛ք ըմբռնել մյուսների տեսակետները:

Այս ուղենիշներն անհրաժեշտ է գրել ցուցապաստառի վրա՝ դասարանում փակցնելու և համագործակցային առաջադրանք կատարելիս ժամանակ առա ժամանակ հիշողությունը թարմացնելու համար:

9. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԻ ՊԼԱՆ

Առարկա՝ մայրենի

Դասարան՝ 6-րդ

Դասի թեման՝ Մ. Գալշոյանի <<Կռունկը>> : Բարդ բառերի տեսակները(միասին, անջատ և գծիկով գրվող բառեր) : Թեմայի ամփոփում

Դասի նպատակը՝ Աշակերտը կարողանա ընդլայնել ճանաչողական դաշտը,

հարստացնել գիտելիքներն այլ առարկաներից, տեքստի դիպաշարը ներկայացնել ըստ խմբերի մտածողության, զարգացնել երևակայությունը և պատկերավոր մտածողությունը,ձևավորել արժեքային համակարգ և երաժշտական ճաշակ:

Դասի կահավորումը՝ դասագիրք, ձայնասկավառակ, սահիկաշար, Կոմիտասի դիմանկարը, այլ նկարներ, քարտեզ:

Կիրառվող մեթոդներ՝ "RAF", <<հինգրոպեանոց շարադրանք>>, <<ելքի քարտ>>, <<մտածողության վեց գլխարկ>>:

Դասի ընթացքը՝ խթանման փուլում ունկնդրում են կոմիտասյան երաժշտություն, ցուցադրվում է մեծ երգահանի դիմանկարը և այլ նկարներ: <<Հինգրոպեանոց շարադրանքի>> արդյունքում գրի են առնում ունկնդրած երաժշտության ներքո ծնված պատկերները և տրամադրությունը, բնութագրում դիմանկարում պատկերված հոգևորականին:

"RAFT" մեթոդի միջոցով լրագրողները հարցազրույց են վարում Կոմիտասի հետ (3-4 հարց): Ունկնդրում են Կոմիտասի <<Կռունկը>> և տեղեկություններ ներկայացնում թռչնի մասին:

Իմաստի ընկալման փուլում կիրառվում է <<Մտածողության վեց գլխարկ>> մեթոդը՝ ըստ նախապես կազմված խմբերի: Խմբերը ներկայացնում են վեց տարբեր մտածողության ձևեր:

Սպիտակ գլխարկ – 1. Կոմիտասը հայ երգի Մեսրոպ Մաշտոցն է(տեղեկություններ Կոմիտասի մասին):

2. Կոմիտասը Անգլիայում՝ Սպիտակ կղզում(1911թ.): Մեծ երգահանի ոդիսականը:

3. Անհանգիստ մարդը: Ճաշի հրավեր: Ընթրիքն ու անկաշկանդ զրույցը:

4. Կարոտի երգը: Իռլանդուհին և հայը:

Սև գլխարկ- 1. Իռլանդացու դժգոհությունը. <<Տասը տարի է՝ ամուսնացած եմ, նրան այս վիճակում չեմ տեսել>>:

2. Ամուսնու և կնոջ զգացողությունները Կոմիտասի երգի նկատմամբ:

3. Իռլանդացու սառնարյուն, անզգացմունքային պահվածքը:

4. Իռլանդուհու <<ատելությունը>> ամուսնու նկատմամբ:

Դեղին գլխարկ- 1. <<Կոմիտասը հայ ժողովրդական երգի փրկիչն է>> Ա. Չոպանյան: Երկար ճանապարհ է անցել Արևմտյան Հայաստանում, անցել գավառից գավառ, հավաքել մեռնող, գաղթող ու ննջող երգերը, սերմանել հույս և ուրախության երգ:

2. Անցել է Եգիպտոսի հայաշատ քաղաքներով և մյուռոնի փոխարեն տարաշխարհիկ հայերին մկրտել է, նշխարի փոխարեն նրանց բերանները երգով քաղցրացրել:

3. Ալեքսանդրիայում հավաքել է հիսուն մանուկներ, աղոթքի տեղ երգ մրմնջացել, հոգիներում արթնացրել հայրենի լեռների շշուկները մատղաշ կոկորդները սրինգ դարձրած՝ փորձել ու նվագել:

4. Կոմիտասը աղավաղումից փրկել է մեր հոգևոր երաժշտության բարձրարժեք նմուշները, աշխարհին ցույց տվել մեր զուլալ, մաքրամաքուր հայկական տոհմիկ երգը:

Կարմիր գլխարկ- Հնչում է Կոմիտասի <<Կռունկը>>:

1. Կոմիտասի ձայնը ու ձայնի հետ լուծված բառերը հոսում են: Իռլանդուհու համար բացվել էր մի հորիզոն, հորիզոնում երկու շնչավոր՝ Կոմիտասն ու երամը կորցրած կռունկը:

2. Կոմիտասի շուրթերով խոսում էր մի ողջ ժողովուրդ, իսկ իռլանդուհին առանց բառերը հասկանալու զգում էր պանդուխտի մենախոսությունը՝ աչքերը կռունկի թևերին…: Իռլանդուհու անսահման հուզմունքը…:

3. –Դա ի՜նչ երաժշտություն էր, ի՜նչ ձայն էր… ես երբեք չպետք է մոռանամ…

Մայրամուտի կարմիրն ու ծովի ճերմակ ալիքները պարում են կոմիտասյան երգի ելևէջների ներքո՝ հեռացնելով իռլանդուհուն իրական աշխարհից:

Հնչում է կոմիտասյան երգը, թև են առնում հույզեր, զգացմունքներ, երազներ:

Կանաչ գլխարկ- 1. Մի օր աշխարհը ճանաչում է Հայոց մեծ եղեռնը, դատապարտում թուրքին, Արարատը գերությունից վերադառնում է:

2. Պանդխտության, սգո, ցավի, կորստյան ու հիշատակի երգեր էլ չեն ծնվում, դրանք մնում են գրքերում՝ որպես հուշ դառն անցյալի:

3. Նոր Կոմիտաս է ծնվում՝ ուրախ-զվարթ երգեր գրելու, հայ երգը աշխարհին ներկայացնելու համար: Նա ապրում է իր պատմական հայրենիքում, դպրոցներ հիմնում Արևմտյան Հայաստանում և կրթում հայ մանուկներին անապակ հայ երգով՝ առանց օտարամոլ խաղիկների:

4. Ու հայ երգը թև առած ճախրում է համայն աշխարհով՝ նոր շունչ առած՝ առանց մելամաղձոտ ու աղեկտուր ելևէջների:

Կապույտ գլխարկ- 1. Կոմիտասը երգահան է, երգիչ, վարդապետ և ուսուցիչ, բանահավաք, խմբավար, հայկական ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր: Կոմիտասը, շրջելով հայաբնակ բնակավայրերով ձայնագրել է ժողովրդական երգարվեստի մի քանի հազար երգ՝ մոռացումից փրկելով հայ ժողովրդի մի ամբողջ մշակույթ:

2. Կոմիտասին համարում են ցեղասպանության զոհ և ցեղասպանության հիմնական խորհրդանիշներից մեկը: Մի առիթով Չ. Չապլինը Ա. Խաչատրյանին ասել է. <<Կյանքում մենք շատ ենք մտածում, շատ քիչ զգում, իսկ հայկական երաժշտությունը պարզապես մաքուր հույզերի անվերջ օվկիանոս է>>:

3. Մաշտոցը այբուբենով փրկեց ազգին կործանումից: Կոմիտասը մոռացության փոշուց փրկեց հայ երգը: Հային հայ պահողը լեզուն է, հավատը, մշակույթը:

Խմբերը կատարում են նաև բառակազմական վերլուծություն՝ ներկայացնելով, միասին, անջատ և գծիկով գրվող բարդ բառերը:

Կշռադատման փուլում դասն ամփոփվում է անավարտ նախադասություններն ամբողջացնելով.

1. ***Այսօր ես ճանաչեցի*** Կոմիտասին ու նրա արվեստն այլ գույներով:

2. Այս դասին ես վերապրեցի իմ ժողովրդի նկատմամբ իրականացրած ցեղասպանությունը:

3. ***Ես հասկացա,*** որ << ազգին պահողը լեզուն է և հավատը>>:

4. ***Այսօր ես որոշեցի*** վարդապետի նման աղոթել ճաշից առաջ:

5. ***Ես համոզվեցի,***որ հայ մշակույթը ազգապահպան գործոն է, այն պիտի պահել ու պահպանել անգին մասունքի պես:

6. ***Ես սիրեցի*** արևմտահայերենը և իմացա հայոց լեզվի զարգացման փուլերը:

7. ***Այսօր ես իմացա***, որ Պ. Սևակի <<Անլռելի զանգակատուն>> պոեմը նվիրված է Կոմիտասին:

8. ***Ես երազում եմ***, որ հայ պանդուխտները տուն դառնան ու ապրեն, արարեն հայրենիքում:

Տնային հանձնարարություն՝ հորինել մի պատմություն, որը պատմում են իռլանդուհու երեխաները 1935թ.-ին՝ լսելով Կոմիտասի մահվան լուրը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Համագործակցային ուսուցում իրականացնելիս խնդիրները լուծվում են խմբի անդամների համատեղ ջանքերի շնորհիվ: Միևնույն ժամանակ կրթական գործունեությունը չի մեկուսացնում սովորողներին միմյանցից, չի սահմանափակում նրանց հաղորդակցությունը, փոխօգնությունն ու համագործակցությունը, այլ, ընդհակառակը, հնարավորություններ է ստեղծում համատեղելու ջանքերը՝ գործելու համակարգված ու ներդաշնակ: Միաժամանակ խմբում առաջադրանքները կատարվում են այնպես, որ թույլ են տալիս հաշվի առնել և գնահատել յուրաքանչյուրի անհատական ներդրումը:

Սովորողների համագործակցային գործունեության մեջ հաջողությամբ ձևավորվում է սովորելու, պլանավորելու, ինքնատիրապետելու, փոխադարձ վերահսկողության և այլ կարողություններ, որոնք կարևոր դեր են խաղում ուսուցման գործընթացում: Համագործակցային գործունեության արդյունքում ձևավորվում է փոխըմբռնում, փոխօգնություն, պատասխանատվություն, սեփական տեսակետն ապացուցելու և պաշտպանելու կարողություն, երկխոսության մշակույթ:

Համագործակցային ուսուցումը զվարճալի է, սովորողները կվայելեն և կաշխատեն ավելի մոտիվացված: Արդյունքում նրանք կսովորեն միասին աշխատել, որը անհրաժեշտ ու կարևոր հիմք է անձնական և աշխատանքային ապագայի համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.<<Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները>> Գ. Հովհաննիսյան, Ա. Զոհրաբյան, Ա. Արնաուդյան և ուրիշներ

2. <<Մեթոդներ և միջոցներ տարրական և միջին դպրոցում հասարակագիտական առարկաների համար>> Ջեյմս Ռ. Սթոքիարդ Կրտսեր / 2001/

3.<< Հասարակագիտության ուսուցման արդի հիմնահարցեր>> Ս. Խաչատրյան,Ս. Պետրոսյան և ուրիշներ

4.<< Ձեռնարկ ուսումնական ծրագրեր մշակող մասնագետների համար>> Ա. Արնաուդյան, Ի. Օհանովա և ուրիշներ

5.<< Հայոց լեզու և գրականության ուսուցիչների 5 – օրյա վերապատրաստումների ուսումնական նյութերի փաթեթ>> Թ. Ալեքսանյան, Ն. Տողանյան և ուրիշներ

6.<< Learning together>> Johnson D. Johnson. R.(1999.)